

**ՅԻՇԵԼՈՎ...**

## ՈՒՒԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ՝ ՄԱՐԴԸ, ԳՐՈՂԸ

1981 Մայիս 18 մեզմէ առյաւէտ կը բաժնուէր 20րդ դարու հանճարեղ գրագէտներէն՝ Ուիլիլմ Սարոյեանը, իր ետին թողելով մօտ 60 տարիներու վրայ երկարող գրական հարուստ վաստակ մը:

Ծնած եւ ապրած Միացեալ Նահանգներու Ֆրէզնօ քաղաքին մէջ, Սարոյեանի գրականութիւնը կ'արտացոլացնէ իր սէրը՝ հանդէպ իր ծննդավայրին, առանց մոռնալու իր բնօրրան հայրենիքը՝ Հայաստանը:

Փուլիցքը մրցանակակիր Սարոյեան՝ իր «Խիզախ պատանին թուշող լարախաղի վրայ» գիրքին համար կը ներշնչուէր Սէն Ուոզի հովիտէն եւ հայ մշակոյթի հարուստութենէն ընդհանրապէս՝ նշմարելի «Անունս Արամ է» հաւաքածոյին մէջ (1940ի լաւագոյն գիրքերէն մէկը), իսկ «Մարդկային կատակերգութիւնը» իր մօրը նուիրւած, Մ.Կ.Մ. (M.G.M.) շարժանկարի կը վերածէր 1943ին եւ կ'արժանանար լաւագոյն պատմումի Օսքարին:

Այս անսակարկ արժէքը անմոռաց պահելու համար եւ արժէքաւորելու իր մեծ վաստակը, Լիրանան ծնած հանրածանօթ լուսանկարիչ եւ ֆիլմարտադրիչ՝ Փօլ Գալինեան 1991ին կ'արտադրէ վաւերագրական ժապաւէն մը՝ «Ուիլիլմ Սարոյեան՝ Մարդը, Գրողը», որ կը պատկերացնէ մեծ գրագէտին կեանքի փուլերը, գրական հարուստ վաստակը եւ մտածումները, գրագէտին իսկ ձայնով: Պատմումը կը կատարէ Գրիգոր Օհանեան, որ աւելի ծանօթ է Մայք Քաննըրզ «Մանիքս» անունով:

Փօլ Գալինեան՝ 1976ին բարեկամի մը միջոցաւ ծանօթանալէ ետք Սարոյեանի, զայն կը նկարէ եւ երկուքը կը բարեկամանան: Գալինեանի նկարած Սարոյեանի դիմանկարներէն մին կ'ընտրուի Միացեալ Նահանգներու եւ Խորհրդային Միութեան թղթատարական գործակալութիւններու կողմէ, 22 Մայիս 1991ին հրատարակուած յիշատակի գրողմատութեան համար:

Գալինեանի «Ուիլիլմ Սարոյեան՝ Մարդը, Գրողը» միջազգային շարժանկարի փառատօներու արժանացած է զանազան մրցանքներու: 1994ին Հիւսթընի 27րդ փառատօնին մասնակցած 57 վաւերագրական ժապաւէններէն երրորդ մրցանակը ստացած է, 1995ին Ֆիլատելֆիոյ 18րդ փառատօնին, գրագէտներու կենսագրութեան բաժնին մէջ, կը խլէ ոսկի մրցանակը, եւ Գոլոմպոսի 43րդ փառատօնին, 80 մասնակցողներու վրայ կը վարձատրուի երկու պրոնզ՝ լաւագոյն ճանաչում մրցանակներով՝ արուեստի եւ մարդասիրական բաժիններուն մէջ եւ պատուոյ յիշատակում՝ պատմումին համար:

Փօլ Գալինեանի լուսանկարները զարդարած են բազմաթիւ հանդէսներ, գիրքեր, սրահներ, օրացոյցեր, իր գործը դարձնելով համաշխարհային արժէք:

Լուսանկարիչը հիւրն է Համազգայինի կոմիտաս մասնաճիւղին՝ 24էն 28 Մայիս, եւ ներկայ պիտի ըլլայ իր արտադրած «Ուիլիլմ Սարոյեան՝ Մարդը, Գրողը» ժապաւէնի ցուցադրութեան: